ԿԱՐԾԻՔ

Նարինե Ալբերտի Շամամյանի «Պարը հայկական հարսանեկան արարողություններում (20-րդ դար – 21-րդ դարասկիզբ)» խորագրով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Հայկական պարը հազարամյակների պատմություն ունի: Յուրօրինակ և անկրկնելի, գեղեցիկ ու բովանդակալից այս մշակույթն արտացոլել է ոչ միայն հայ ժողովրդի հոգևոր հարուստ աշխարհը, նրա ազատատենչ ոգին, արիությունն ու հերոսականությունը, մեղմությունն ու քնարականությունը, այլև կենցաղամշակութային բնութագիրը: Հայկական պարը, սկիզբ առնելով վաղնջական ժամանակներից, իր հետ բերում է բնապաշտության, ծիսական արարողությունների, ռազմի, ողբի, խրախճանքի, ազգային տոնախմբությունների և կենցաղային պատկերների հարուստ նկարագրություն: Մեծն Կոմիտասն այդ առիթով ասել է. «Մարդկային կյանքի աչքի զարնող երևույթներից մեկն էլ պարն է: Ժողովրդական պարն արտահայտում է յուրաքանչյուր ժողովրդի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:

Հայ ժողովուրդն իր նախնիներից ժառանգություն ստացած պարային մշակույթը պահպանել է մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը: Վերջին ժամանակաշրջանում տեղի ունեցած աննախադեպ իրադարձությունները բացասական հետևանքներ են թողել նաև այս համալիրում: Բացի նրանից, որ հիմնովին կորստի են մատնվել որոշակի պատմազգագրական շրջաններին հատուկ բազմաթիվ պարեր, պահպանվածներն էլ կրել են մի շարք մասնակի աղավաղումներ ու կորուստներ: Այս առումով չափազանց արդիական են պարային մշակույթի վերաբերյալ գիտական անդրադարձները՝ դրանք արժևորելու, սերունդներին փոխանցելու, ժողովրդի սեփականությունը դարձնելու առումով:

Ատենախոսը և իր գիտական ղեկավարը ճիշտ են վարվել սույն թեման ընտրելու՝ պարային մշակույթում այդ բացը լրացնելու և հանրայնացնելու տեսանկյունից:

Հայ ժողովրդական պարերը հայոց հարսանեկան ծիսահամալիրում կարևոր տեղ են զբաղեցնում թե՛ իրենց գործառույթներով և թե՛ խորհրդաբանությամբ, ուստի և սույն հետազոտությունն իր ընդգրկուն հարցադրումներով թեմատիկ բովանդակությամբ և՛ արդիական է և՛ իր տեսակի մեջ՝ նորարարական:

Ներածության մեջ (էջ 5-14) ատենախոսն անդրադառնում է ընտրված թեմայի կարևորության, արդիականության, գիտաճանաչողական և գործառնական նշանակության հարցերին: Հանգամանալից վերլուծված է թեմային վերաբերող մասնագիտական գրականությունը, տրված է բանահավաքչական սկզբնաղբյուրների իրական գնահատականը, նշելով, որ դրանց մեծ մասը հեռու են եղել մասնագիտական, կրթական անհրաժեշտ պահանջներից, ներկայացված չեն եղել բավարար խորությամբ ու տեխնիկական հնարքներով:

Պատշաճ գնահատելով՝ զարմանալի է, որ ատենախոսն այստեղ հպանցիկ է անդրադառնում իր բազմամյա դաշտային ազգագրական հետազոտությունների աշխարհագրությանը, բանասացներից գրառված նյութերի արժեքին, գրառման մեթոդներին: Միայն իր գրառած դաշտային ազգագրական նյութերի և հետազոտությունների շնորհիվ հրատարակել է տասը ծավալուն գիտական հոդված, որոնցում արտացոլված են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ատենախոսը, ի տարբերություն մյուս ուսումնասիրողների, առաջ է քաշում նոր բացահայտումներ և մեկնաբանություններ պահանջող խնդիրների շարք.

1. Հայ ժողովրդական պարերի ընդհանուր դիմագծի և տեղական առանձնահատկությունների վերհանումը:
2. Ավանդական ծիսահամալիրում կատարվող պարերի իմաստի ու նշանակության, արարողության մեջ դրանց գործառույթների հստակեցումը:
3. Արդի հարսանեկան արարողությունների համատեքստում բեմադրված պարերի ոճային տեսակների ներկայացում և արդի հարսանիքի կառուցվածքի համեմատություն ավանդականի հետ՝ պարային բաղադրիչի տեսանկյունից:

Ատենախոսի համոզմամբ՝ միայն տվյալ խնդիրների լուծման արդյունքում է ձևավորվում հստակ պատկերացում ավանդական և արդիական հարսանեկան ծիսահամալիրներում ներառված պարերի վերաբերյալ: Ատենախոսության մեջ դրանք դասակարգված են ըստ ծեսերի հերթականության և ըստ գործառույթների:

Ատենախոս Նարինե Շամամյանն իր գլխավոր նպատակն է համարել հայկական հարսանեկան ծեսերում կատարվող պարերի ամբողջական ներկայացումը, դրանց դասակարգումն ըստ համապատասխան արարողությունների, պարի և արարողության միջև ներքին կապի բացահայտումը: Այդ նպատակին հասնելու համար ատենախոսն ընտրել է աշխատանքի իրականացման արդարացված ուղի.

ա.Գրավոր ազգագրական աղբյուրների համալիր ուսումնասիրություն:

բ. Սրբուհի Լիսիցյանի կազմած հարցարանի ուղեկցությամբ դաշտային ազգագրական նյութերի գրառում և հետազոտության ընթացքում պարերի նկարահանում:

գ. Հայկական ֆիլմերի դիտման և պարային դրվագների հետազոտման մեթոդի կիրառում:

դ. Գրավոր աղբյուրների, դաշտային հետազոտության և ֆիլմերի առկա պարային դրվագների համեմատություն:

Այս ամենի արդյունքում սույն ատենախոսությունը հայ ժողովրդական հարսանիքում կատարվող պարերի վերաբերյալ ամբողջական առաջին ուսումնասիրությունն է, որում պարերը ներկայացվում են ըստ արարողությունների հերթականության, գործառույթների ու նշանակության: Ահա թե ինչու ատենախոսությունը թե՛ իր բովանդակային կառուցվածքով և թե՛ նպատակադրմամբ ամբողջությամբ գիտական նորույթ է.

1. Ատենախոսության մեջ պարն ուսումնասիրվում է ազգագրական նյութի հետ համատեղ՝ բանահյուսական, արվեստաբանական տվյալների հետ զուգակցված:
2. Առաջին անգամ կատարված է հարսանեկան արարողություններում պարերի դասակարգում՝ ըստ գործառույթի, կատարման վայրի, կատարողական կազմի:
3. Վեր հանված տեղական և այլ ժողովուրդներին բնորոշ պարերի առկայությունը և դրանց ազդեցությունները հարսանեկան պարային համալիրում:
4. Հստակեցվել են պարանունների հետ կապված մի շարք հարցեր:
5. Արխիվային անտիպ նյութերի ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել հարսանեկան պարերի հետ կապված ուշագրավ փաստեր:
6. Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում հեղինակի կողմից բացահայտված շուրջ հարյուր հիսուն պար, որոնցից հիսունը ոչ մի տեղ արձանագրված չեն:

Ըստ որում՝ ատենախոսության շատ կարևոր կողմերից մեկն էլ այն է, որ այն կառուցված է հիմնականում ատենախոսի դաշտային հետազոտությունների հիման վրա: Այս հանգամանքը շատ գործառնական և ուսուցողական արժեք ունի: Այս առումով ատենախոսության արդյունքները պրակտիկ նշանակություն են ձեռք բերում:

Հարկ ենք համարում առանձնացնել գործառնական նշանակության մի քանի կողմեր.

1. Հարսանիքում կատարվող պարերով և դրանց գործառույթների հստակ բաղդատման ճանապարհով կարելի է հարստացնել ավանդական պարային խմբերի պարացանկերը, որով հարստանում են ոչ միայն պարային բեմադրությունները, այլև հնարավորություն է ընձեռվում նաև այս պարերով մասնակցել միջազգային ֆոլկլորային փառատոններին:
2. Պարային մշակույթի մասին ֆիլմեր նկարահանել:
3. Այն ծառայեցնել նաև թատերական բեմադրություններն ավելի գունագեղ և հետաքրքիր դարձնելուն:
4. Դրանք ծառայեցնել հայ ժողովրդական պարի պահպանման և հանրահռչակման գործին՝ փառատոնների, տոնակատարությունների, հարսանեկան հանդիսությունների կազմակերպման միջոցով:

Այժմ անդրադառնանք ատենախոսության կառուցվածքին, բովանդակությանը:

Այն բաղկացած է երեք գլուխներից, ներածությունից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերից, հավելվածից, լուսանկարների հարուստ ցանկից:

Ատենախոսության առաջին գլխում (էջ 15-42), որը կրում է «Հայկական հարսանեկան արարողություններում կատարվող պարերի առանձնահատկությունները» վերնագիրը, ատենախոսն անդրադառնում է եղած ուսումնասիրություններում սակավ անդրադարձներ արված հետևյալ ուշագրավ հարցերին.

ա. պարի գիտական ուսումնասիրությանը,
բ. հարսանիքում կատարվող պարերի ժողովրդական և գիտական բնորոշումներին,
գ. հարսանեկան պարերի կանոնակարգումներին,
դ. խնջույքում մրցույթ-պարերգերի առանձնահատկություններին,
ե. հարսանեկան ծեսում կատարվող խմբապարերի և մենապարերի հիմնական ձևերին,
զ. հայոց հարսանեկան պարերում խորհրդանշական թվերի իմաստաբանությանը:

Առաջին գլուխը գրեթե ամբողջությամբ նաև մշակութաբանների, ազգագրագետների, հնագետների համար ուսումնական ձեռնարկի արժեք ունի, որտեղ տրված է պարագիտության ուսումնասիրության աղբյուրների և պատմագրության համալիր ուսումնասիրությունը, պարի բաղադրատարրերը, դրանց կատարման տեղն ու ժամանակը, պարանվանումների մեկնությունները:

Երկրորդ գլուխը կրում է «Պարերն ու պարերգերը հայոց ավանդական ծիսաշարում» (էջ 43-95) վերնագիրը, անդրադարձ է արվում մինչհարսանեկան, բուն հարսանեկան և հետհարսանեկան արարողություններում կատարվող պարերին, որոնք ներկայացվում են ըստ ծեսերի հերթականության:

Այս գլխում փաստացի ներկայացվում է ավանդական հարսանեկան այն արարողությունների շարքերը, որոնք ուղեկցվել են բացառապես պարերով: Ավանդական հարսանեկան արարողության պարերի հիմնական ուսումնասիրվող նյութն ընդգրկում է 20-րդ դարի սկզբից մինչև ուշ խորհրդային շրջանը: Այս գլխի 19-ը ենթագլուխներում անդրադարձ է կատարվել հարսանեկան շարքի ծեսերին ուղեկցող պարերի ու պարերգերի խորը և իմաստալից բնութագրումներին:

Երրորդ գլուխը նվիրված է հարսանիքներում ավանդական պարերի ձևափոխված տարբերակների, ինչպես և թատերականացված, բեմականացված պարերի ուսումնասիրությանը. «Պարն արդի հարսանեկան արարողություններում (20-րդ դարավերջ, 21-րդ դարասկիզբ)» (էջ 98-156): Այստեղ հիմնականում ներկայացվում են նոր պարառճերը, այլազգի բազմատեսակ պարերի նորամուծությունները, ինչպես և ավանդական պարերի ձևափոխումները և դրանց պատճառները:

Ատենախոսն անդրադառնում է նաև երաժիշտների կազմի, հնչող երաժշտությունների ու երգերի ընտրության, բովանդակության, նորարարության հարցերին:

Ատենախոսության այս հատվածում հանգամանալից անդրադարձ կա բուն հարսանեկան հանդիսության պարերի, հարսանյաց խնջույքի ժամանակ կատարվող բազմաբնույթ պարառճերի վերաբերյալ: Միաժամանակ ատենախոսը անդրադառնում է մերօրյա ժամանակներում հայ ժողովրդական ավանդական պարերի տարածման առկա գործընթացներին, հայ պարարվեստի նվիրյալների, պարային ինքնագործ խմբերի գործադրած ջանքերին:

Այսպիսով, ընդհանրացնելով ատենախոս Նարինե Ալբերտի Շամամյանի կատարած աշխատանքը, գոհունակությամբ արձանագրում եմ, որ այն խիստ արդիա-

կան, գիտաճանաչողական լուրջ հետազոտություն է, իր տեսակի մեջ՝ միանգամայն նորարարություն: Հստակ ձևակերպված են նպատակն ու խնդիրները, կառուցվածքային տրամաբանական ամբողջականությունը: Տեքստն ունի հստակ շարադրանք և փաստարկված են վերլուծությունները, առկա են բոլոր անհրաժեշտ հղումները, տրամաբանական եզրահանգումները, որոնք լիովին արտացոլում են կատարված ուսումնասիրության արդյունքները:

Ատենախոսությունը շարադրվել է փաստագրական հարուստ նյութի հիման վրա՝ հենված պատմաճանաչողական և պատմահամեմատական, վերլուծական-պատճառահետևանքային մեթոդաբանության սկզբունքների կիրառմամբ: Ազգագրական գիտության հիմնական աղբյուրագիտական բազան դաշտային ազգագրական և բանահավաքչական գրառված նյութերն են, որոնք կազմում են ատենախոսության արժանիքներից մեկը: Իսկ սա շատ կարևոր խնդիր է, քանզի ներկայումս ավանդական ազգագրությունն, ըստ էության, մոռացության է մատնվում ազգագրագետ-բանահավաքներիս աչքի առաջ:

Օգտագործված են մեծ թվով գրականություն և հոդվածներ, ըստ որում, դրանցից տասնհինգն ատենախոսինն է: Նշված գրականության ցանկում զգալի թիվ է կազմում օտար լեզուներով մասնագիտական գրականությունը: Աշխատանքը գրված է կիրթ հայերենով, գրեթե զերծ է վրիպակներից և տարընթերցումներից:

Այժմ որոշ նկատառումներ աշխատանքում տեղ գտած բացթողումների վերաբերյալ, որոնք առավելապես ունեն առաջարկությունների ենթատեքստ.

1. Անդրադարձ արված չէ մայր ժողովրդի մի զգալի հատվածի հարսանեկան պարերի, պարառճերի հետազոտությանը:
2. Ցանկալի կլիներ տալ ատենախոսության մեջ նկարագրված պարերի նոտագրումը:
3. Ներածության մեջ նշված ենթագլուխների քանակը չի համապատասխանում շարադրանքի իրական ենթագլուխների թվին:
4. Օգտագործված են առանձին եզրույթներ, որոնց բացատրությունը պետք է տրվեր դրանց կողքին՝ փակագծերում. օրինակ՝ էջ 15-ում օգտագործված է *կատարսիսային* թեթևություն կամ ինչ է նշանակում *պարի թերապևտ*, լավ կլիներ *միս մորթել* անվանաձևը փոխարինվեր *եզ մորթել* ծիսական շարքով:
5. Մեր օրերում առավել հետաքրքիր կլիներ Սյունիքում և Արցախում դաշտային հետազոտությունների իրականացումը, որն առավել շատ կհարստացներ աղբյուրագիտական ատաղձը:
6. Ցանկալի կլիներ հիշատակվեր հետազոտությունների անցկացման վայրը, ժամանակը, բանասացների անուն-ազգանունները, տարիքը, մասնագիտությունը, բանիմացությունը, իսկ գրականության ցանկում՝ սկզբնաղբյուրների բաժնում, տրվեր բանասացների ցանկը:

7. Ցանկալի կլիներ պարի վերաբերյալ հույն պատմիչների վկայություններից բացի նաև հայ պատմիչների հիշատակությունները նույնպես վերլուծվեր, որն առավել կհարստացներ առաջին գլուխը:

Այդուհանդերձ, դիտարկված նկատառումները բոլորովին չեն նսեմացնում ատենախոսության արժեքը, որոնք մեր հարգարժան ատենախոսը հաշվի կառնի հրատարակության ժամանակ, որը խիստ անհրաժեշտ է:

Հանձին այս ատենախոսության՝ մենք գործ ունենք տարիների գիտահետազոտական տքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող մի կարևոր ուսումնասիրության հետ, որի արժեքը անգնահատելի է:

Ատենախոսությունը լիովին բավարարում է պատմագիտության թեկնածուի ատենախոսական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, հետևաբար միջնորդում եմ, որ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող հարգարժան խորհուրդը Նարինե Ալբերտի Շամամյանին շնորհի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ հրապարակային պաշտպանության ներկայացված «Պարը հայկական հարսանեկան արարողություններում (20-րդ դար – 21-րդ դարասկիզբ)» ատենախոսության համար: Նա աներկբա արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Ռ. Ա. Նահապետյան
ԵՊՀ հնագիտության և ազգագրության
ամբիոնի պրոֆեսոր, պ. գ. դ.

ԵՊՀ հնագիտության և ազգագրության
ամբիոնի պրոֆեսոր, պ. գ. դ. Ռաֆիկ Ասքանազի Նահապետյանի
ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտքարտուղար՝ պ. գ. թ. Լ. Ս. Հովսեփյան